Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
Պատասխաններ 10-րդ դասարան

1-2. Արշալույսի շքեղահյուս ծիրանու ներքո երևաց գրեթե հազար տարի միայնության մեջ ապրող գողտրիկ կղզին՝ իր ժայռակոփ լեռնապարով, վայրի ու փարթամ բուսականությամբ: Տիեզերական անվերջություն հիշեցնող օվկիանոսի խորքում՝ նրա հայելանման մակերեսին, կղզյակն ասես չհղկված զմրուխտ է՝ արևից փայլող որձաքարե շրջանակով գոտևորված:

Թվում է՝ ջրում ընկղմված կղզին անբասիր գեղեցկությամբ ծեքծեքուն մի պճնամոլ է, որ, գիտակցելով իր դշխոյական վեհությունը, հանդուգն հայացքով է նայում իրեն սիրահարված տրտմաշուք օվկիանոսի հեղհեղուկ ալիքներին, որոնք մերթ մեղմ խշշյունով անարգել մոտենում, զգվում են իրենց տիրուհու քղանցքներին, մերթ դժկամությամբ հետ քաշվելով՝ հառաչում:

Լուսնկա գիշերներին, երբ լռում է թռչունների հոգեպարար գեղգեղանքը, և լսվում են միայն ալիքների՝ անդորրություն պարգևող միալար ճողփյունները՝ ներդաշնակորեն միահյուսված զեփյուռի մեղմ շնկշնկոցին, կղզին նմանվում է վեղարավոր ապաշխարողի՝ ծնկաչոք աղոթող: Շուտով, սակայն, ականակիր մութը սկսում է տեղի տալ՝ հետզհետե տարրալուծվելով, ու անհետացած հեքիաթային խաբկանքին փոխարինում են լուսառատ ու շենշող պատկերները:

Կղզու հարավ-արևելքում՝ ուղղակի մեր դիտակետին դեմ հանդիման, աղոտ գծագրվում է երկուհազարամյա բերդ-ամրոցը՝ վաղուց ի վեր փլատակված միջնաբերդով՝ կառուցված պերճ Արևելքին բնորոշ խայտաբղետ աղյուսներով ու քառակուսի պատուհաններով:

3. սոսափյուն-**շնկշնկոց**, գեղգեղանք-**դայլայլ**, ցնորք-**խաբկանք**, պայծառ-**շենշող-լուսառատ**, հավակնոտ-**հանդուգն**, դյուրափոփոխ-**հեղհեղուկ**, պճնասեր-**պճնամոլ**,
պչրասեր- **ծեքծեքուն**, փարվել-**զգվել**, ընկրկել-**տեղի տալ-հետ քաշվել:**

4. **ծիրանի, հազար, լեռնապար, վայրի, ջրում, իր, անարգել, միալար, ականակիր, աղոտ և այլն**

5. Բարդածանցավորներ՝ **շքեղահյուս, հայելանման, որձաքարե ծեքծեքուն, հեղհեղուկ, քղանցք, լուսնկա, գեղգեղանք, շնկշնկոց, միջնաբերդ, քառակուսի, արևելք, հարավարևելյան, երկուհազարամյա և այլն**

6.**ապիկար**(անկարող,ապաշնորհ)-**ապիրատ**(անիրավ,անարդար,անօրեն)
աշտանակ(ճրագակալ, մոմակալ)-**աշտարակ**(բարձր ու նեղ կառույց)
հովատակ(արու ձի)-**հրովարտակ**(թագավորի գրավոր դիմումը ժողովրդին),
ակութ(օջախ, փոքր թոնիր**)-անութ**(թևատակի փոսը, թևատակ),
աստանդական(պանդուխտ)-**ասպնջական**(հյուրընկալ,հյուրասեր, վանատուր)

7. **մակերեսին**-բացահայտիչ, **զմրուխտ**-ստորոգելի, **շրջանակով** – ներգործող խնդիր, **որ**-ենթակա, **վեհությունը**-ուղիղ խնդիր, **ալիքներին**-հանգման խնդիր, **խշշյունով**-ձևի պարագա, **իրենց**-հատկացուցիչ, **անհետացած**-որոշիչ, **աղյուսներով**- միջոցի խնդիր,

8. **Կյանք մտնել, կյանք պարգևել, կյանք տալ, կյանքը տալ, կյանքի ընկեր, կյանքի գնով, կյանքի դպրոց, կյանքի բաժակը քամել, կյանքի թելը կտրվել, կյանքի հետ խաղալ, կյանքի վրա խաչ քաշել, կյանքին վարդագույն ակնոցով նայել, կյանքից հեռանալ, կյանքով երդվել և այլն:**

Գնահատման չափանիշներ 10-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Յուրաքանչյուր ոչ ճիշտ պատասխանի դեպքում հանվում է՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
2. Բնագրի ճիշտ կետադրության համար՝ 5 միավոր:
   Կետադրական կանոնին վերաբերող յուրաքանչյուր ոչ ճիշտ նշանի դեպքում հանվում է 0,5 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
   Եթե խոսքի մասը կամ բառիմաստը սխալ է նշված, միավոր չի տրվում:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
   Եթե ածանցը նշված չէ, միավոր չի տրվում:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
   Ճիշտ բացատրության համար՝ 0,25, բառակապակցության համար՝ 0,25 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
   Դարձվածքի համար՝ 0,25, բացատրության համար՝ 0,25 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր, շարադրության ծավալը չապահովելու համար՝ 0,5 միավոր: